

ՏԵՂԵԿԱՆՔ

2013 թվականի նոյեմբեր ամսին ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների համար կազմակերպված և անցկացված մասնագիտական դասընթացների արդյունքների մասին

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի (այսուհետ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողով) կողմից ձեռնարկվել են բավականին միջոցառումներ ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների համար մասնագիտական դասընթացներ կազմակերպելու և պատշաճ մակարդակով անցկացնելու համար:

Տարածքային ընտրական հանձնաժողովների առաջարկությունների հիման վրա Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից 2013 թվականի հոկտեմբերի 24-ին հաստատվել է ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների համար մասնագիտական դասընթացներ կազմակերպելու ժամանակացույցը, իրականացվել է ըստ գոտիների տեղաբաշխումը, որի համաձայն Մարտակերտի շրջանը բաժանվել է 6, Հաղբութի շրջանը՝ 1, Ստեփանակերտ քաղաքը՝ 2, Մարտունու շրջանը՝ 3, Քաշաթաղի շրջանը՝ 2, Ասկերանի շրջանը՝ 2 գոտիների: Մասնագիտական դասընթացներն անց են կացվել 2013 թվականի նոյեմբերի 1-30-ը, որին մասնակցել և որակավորման վկայականներ են ստացել 1233 դիմումատուներ՝ 142 համայնքներից:

Հաշվի առնելով, որ դասընթացների մասնակիցների 71.5%-ը (882 քաղաքացի) նախկինում մասնակցել է մասնագիտական դասընթացների, ի տարբերություն նախորդ տարիների, նոյեմբեր ամսվա ընթացքում դասընթացները դասախոսական կազմի կողմից վարվել են առավելապես բանավեճերի, ընտրական օրենսգրքի առանձին երկիմաստություն պարունակող հատվածների, պրակտիկայում հաճախակի հանդիպող դրվագների վերլուծությամբ, որին ակտիվ մասնակցություն են ցուցաբերել դասընթացների մասնակիցները:

Որակավորման դասընթացների վարման աշխատանքներին նոյեմբեր ամսում, նույնպես առաջին անգամ, ընդգրկվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի և Տարածքային ընտրական հանձնաժողովների անդամները:

Ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների համար մասնագիտական դասընթացները նախապատրաստվել, կազմակերպվել և անցկացվել են հրապարակայնորեն, ընթացքը պարբերաբար լուսաբանվել է թե շրջանային, և թե հանրապետական զանգվածային լրատվության միջոցներով, իսկ դասընթացների ավարտից հետո արդյունքները հրապարակվել են:

Այսպիսով՝ 2013 թվականի նոյեմբերին ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների համար կազմակերպված մասնագիտական դասընթացներին մասնակցել և որակավորման վկայականներ են ստացել ԼՂՀ

ընտրական իրավունք ունեցող 1233 քաղաքացիներ, որոնցից 351-ը (28,5%)՝ առաջին անգամ:

Որակավորում ստացած քաղաքացիներից 562-ը (45,6%) ունեն բարձրագույն, 321-ը (26%)՝ միջին մասնագիտական, 350-ը (28,4%)՝ միջնակարգ կրթություն, ըստ կուսակցական պատկանելության՝ 943-ը (76,5%) անկուսակցական են, 177-ը(14,4%)՝ Արցախի ժողովրդավարական, 76-ը (6,2%)՝ Ազատ հայրենիք, 36-ը (2,9%)՝ Հայ Յեղափոխական Դաշնակցություն, 1-ը (0,1%) ԼՂ կոմունիստական կուսակցությունների անդամներ են, ըստ զբաղվածության՝ 1018-ը (82,6%) աշխատում են, 215-ը (17,4%) չեն աշխատում, 494-ը (40,1%) արական, 739-ը (59,9%) իգական սեռի ներկայացուցիչներ են, ըստ տարիքի՝ 372-ը (30,2%) 18-35, 521-ը (42,3%) 36-50 և 340-ը (27,6%) 50-ից բարձր տարիքի քաղաքացիներ են:

Ընդհանուր առմամբ 2013 թվականին ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների համար կազմակերպված մասնագիտական դասընթացների մասնակցել և որակավորման վկայականներ են ստացել 2085 ԼՂՀ ընտրական իրավունք ունեցող քաղաքացիներ, որոնցից 69-ը մինչև սեպտեմբերի 1-ը, 783-ը՝ սեպտեմբեր ամսում և 1233-ը նոյեմբեր ամսում, ընդ որում՝ 558-ը կամ 26,7%-ը դասընթացներին մասնակցել են առաջին անգամ, այսինքն՝ ընտրությունների կազմակերպման և անցկացման ժամանակ տեղամասային ընտրական հանձնաժողովների գրեթե մեկ երրորդը կձևավորվեն նոր անդամներից:

Հաշվի առնելով, որ որակավորման վկայականներ տրվում են 3 տարի ժամկետով, իսկ 2011-2013թթ. մասնագիտական դասընթացներին մասնակցել և որակավորման վկայականներ են ստացել ընդամենը 2872 քաղաքացիներ (413-ը՝ 2011թ., 374-ը՝ 2012թ. և 2085-ը՝ 2013թ.) ուստի ներկա դրությամբ բոլոր տեղամասային ընտրական հանձնաժողովները կարող են ձևավորվել ընտրական օրենսգրքի դրույթներին համապատասխան:

Նախատեսվում է 2014-2015թթ. մասնագիտական դասընթացներում ընդգրկել ավելի քան 900 քաղաքացիների:

Ամփոփ տվյալները կցվում են:

ԼԵՌԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ